ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆԱԹԱՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՄԲԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/1

ք. Սիսիան «19» հոկտեմբեր 2022թ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Հակոբջանյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Արսեն Գրիգորյան, ի դեմս անհատ ձեռնարկատեր Ա. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Շենաթաղ բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատության խմբասենյակի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 120 (մեկ հարյուր քսան) օրացույցային օրվա ընթացքում:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[28]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

---

[28] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 9860960 (ինը միլիոն ութ հարյուր վաթսուն հազար ինը հարյուր վաթսուն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[30.1]:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

30.1 *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

---

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է տասնմեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Միսիանի համայնք	Ա/Ձ Արսեն Գրիգորյան
ք. Միսիան, Միսական 31	մ. Արարատ, Նոր Խարբերդ 1 փ. 20
ՀՀ՝ Ֆին.նախ. գործ. վարչ.	Արտշինբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 900292180032	Հ/Հ՝ 2472900008810000
ՀՎՀՀ՝ 09215978	ՀՎՀՀ՝ 47730148
Համայնքի ղեկավարի Պաշտոնակատար ______ Ա. Հակոբջանյան (ստորագրություն) Կ.Տ	Անհատ ձեռնարկատեր ______ Ա. Գրիգորյան (ստորագրություն) Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«19» Հոկտեմբերի 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՇԵՆԱԹԱՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՄԲԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվները կցվում է հրավերին:

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Սյունիքի մարզի, Սիսիանի համայնք, Շենաթաղ բնակավայրում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ՝ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ՝ 900292180032
ՀՎՀՀ՝ 09215978

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար _____ Ա. Հակոբջանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ա/Ձ Արսեն Գրիգորյան
մ. Արարատ, Նոր Խարբերդ 1 փ. 20
Արտշինբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2472900008810000
ՀՎՀՀ՝ 47730148

Անհատ
ձեռնարկատեր _____ Ա. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«19» Հոկտեմբեր 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՇԵՆԱԹԱՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՄԲԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքի անվանումը	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	*Սիսիան համայնքի Շենաթաղ բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատության խմբասենյակի վերանորոգման աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	120 օրացույցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ՝ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ՝ 900292180032
ՀՎՀՀ՝ 09215978

Համայնքի ղեկավարի
Պաշտոնակատար _____ Ե. Հակոբջանյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ա/Ձ Արսեն Գրիգորյան
մ. Արարատ, Նոր Խարբերդ 1 փ. 20
Արտշինբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2472900008810000
ՀՎՀՀ՝ 47730148

Անհատ
ձեռնարկատեր _____ Ա. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 3
«19» Հոկտեմբեր 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211228	*Սիսիան համայնքի Շենաթաղ բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատության խմբասենյակի վերանորոգման աշխատանքներ*	⋮	⋮	⋮	9860960	9860960	9860960	9860960	9860960	9860960	9860960	9860960	9860960	9860960

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ՝ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ՝ 900292180032
ՀՎՀՀ՝ 09215978

Համայնքի ղեկավարի
Պաշտոնակատար _____ Ա. Հակոբջանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ա/Ձ Արսեն Գրիգորյան
մ. Արարատ, Նոր Խարբերդ 1 փ. 20
Արտշինբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2472900008810000
ՀՎՀՀ՝ 47730148

Անհատ
ձեռնարկատեր _____ Ա. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
«19» Հոկտեմբերի 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«19» Մայիս 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Շենաթաղ բնակավայրի 3-րդ փողոց 1/1 հասցեի մանկապարտեզի խմբասենյակի վերանորոգման աշխատանքների

ՀՀ	Հիմնա վորում	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Աշխատանքի միավորի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	Աշխատանքի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	Կշիռը՝ ըստ հրավերի %	Կշիռը՝ ըստ մասնակցի %
1	2	3	4	5	6	7	8	9
		1 . Ընդհանուր շինարարական աշխատանքներ						
		Քանդման աշխատանքներ						
1	1-962	4-րդ կարգի գրունտի քանդում հատակների տակ ձեռքով 15 սմ հաստությամբ	խմ	2.0	4.250	8.50		
2	9-37 Գ=0,6 Գ=0,7	Մետաղապլաստե պատուհանի ապամոնտաժում / նյութի հետ վերադարձով /	քմ	1.6	2.188	3.50		
3	46-122	Փայտե պատուհանների ապամոնտաժում պատուհանագոգերի հետ / նյութի հետ վերադարձով /	քմ	4.2	1.333	5.60		
4	46-124	Փայտե դռների ապամոնտաժում / նյութի հետ վերադարձով /	քմ	5.1	1.588	8.10		
5	46-79	Բացվածքների բացում 650 մմ հաստ. քարե պատերում	խմ	5.6	1.589	8.90		
6	46-80	200 մմ հաստ. խարամաբետոնե պատերի քանդում	խմ	2.6	1.885	4.90		
7	46-88	100 մմ հաստ. խարամաբետոնե միջնորմների քանդում	քմ	1.6	1.188	1.90		
8	46-109	Կերամիկական սալիկներով հատակների քանդում	քմ	50.6	1.051	53.20		
9	46-99	Բետոնե հատակների քանդում	խմ	0.4	4.750	1.90		
10	13-5 վեր.	Հախճասալերի քանդում	քմ	2.8	0.857	2.40		
11	46-93	Կախովի առաստաղների քանդում / նյութի հետ վերատարձով /	քմ	27.8	0.881	24.50		
12	10-64 Գ=0.8	Առաստաղի փայտյատաշեղային սալերից / ДВП / երեսապատման քանդում / նյութի հետ վերատարձով /	քմ	19.0	0.647	12.30		
13	9-122	Պատուհանների երկաթե ճաղավանդակների ապամոնտաժում / նյութի հետ վերատարձով /	տ	0.1	154.000	15.40		
14	46-35	Պատերի սվաղի քանդում	քմ	82.0	0.871	71.40		
15	46-37	Ապամոնտաժվող դռների և պատուհանների շեպերի սվաղի քանդում	քմ	9.8	0.643	6.30		
16	14-320 վեր.	Պատերի մաքրում հին ներկից	քմ	84.8	0.619	52.52		
17	27-77 վեր.	Շինության մաքրում քանդված շին.նյութերից և աղբից	տ	27.2	0.798	21.70		
18	23-229 վեր.	Քանդված շին.նյութերի և աղբի բարձում ա/մեքենաները ձեռքով	տ	27.2	0.798	21.70		
19	գնաց.3 էջ 50	Նույնի տեղափոխում ա/մեքենաներով 3 կմ հեռավորության վրա	խմ	17.0	0.639	10.86		
		Ընդամենը				335.58	3.40	3.40
		Հիմքեր						
20	6-20	Ե/բետոնե հիմքերի իրականացում B15 դասի բետոնով խամքարաբետոնե միջնորմների տակ	խմ	1.3	0.639	16.05		
21	շուկա	Ամրան 12 A !!!	տ	0.04	1230.750	49.23		
22	շուկա	Ամրալար 6,5 A !	տ	0.05	1029.000	51.45		
		Ընդամենը				116.73	1.18	1.18
		Պատեր						
23	8-43	Ամրանավորված միջնորմների կառուցում 400*200*100 մմ չափերի թեթև բետոնե բլոկներով	քմ	9.7	0.639	82.80		
24	8-140	Ամրանավորված պատերի կառուցում 400*200*200 մմ խարամաբետոնե բլոկներով	խմ	2.8	9.089	25.45		
25	շուկա	Ամրան 10 A !!!	տ	0.02	5422.500	108.45		
26	շուկա	Ցանց պողպատե , ամրանային եռակցված , Вр d=3,0մմ , բջիջը 100 x 100 մմ	քմ	3.9	11.741	45.79		
27	շուկա	Ալյումինե , բլոկով , սպիտակ , 46 մմ հաստ . , առանց ջերմակամուրջի , խուլ , պրոֆիլ / արտերկիր / միջնորմների տեղադրում	քմ	5.4	11.065	59.75		
		Ընդամենը				322.24	3.27	3.27
		Դռներ						
28	շուկա	Մետաղապլաստե , բլոկով , սպիտակ , 60 մմ հաստ . , ապակեփաթեթով 4+4 մմ , հայկական պրոֆիլ դռների տեղադրում	քմ	11	41.636	458.00		
29	շուկա	Մետաղապլաստե , բլոկով , սպիտակ , 60 մմ հաստ ., խուլ , հայկական պրոֆիլ դռների տեղադրում	քմ	6.4	23.352	149.45		

30	շուկա	Շվեցարների տեղադրում	հատ	2.0	60.435	120.87		
		Ընդամենը				728.32	7.39	7.39
		Պատուհաններ						
31	շուկա	Մետաղապլաստե , բլոկով , սպիտակ , 60 մմ հաստ., ապակեփաթեթով 4x4 մմ , հակկական պրոֆիլ պատուհանների տեղադրում քարե պատերում, բացվող փեղկով	քմ	4.5	21.278	95.75		
32	շուկա	Նույնը , չբացվող փեղկով	քմ	4.5	21.278	95.75		
33	շուկա	Պլաստմասե 40 սմ լայնությամբ սպիտակ պատուհանագոգերի տեղադրում	մ	3.9	18.438	71.91		
		Ընդամենը				263.41	2.67	2.67
		Հատակներ						
34	11-6	Հիմնատակի պատրաստում 10-15 մմ ֆրակցիայի բազալտե խճով 10 սմ հաստությամբ	խմ	4.7	4.153	19.52		
35	11-6	Նույնը , 21 սմ հաստությամբ	խմ	3.0	6.953	20.86		
36	11-11	Երկաթբետոնե նախապատրաստական շերտի իրականացում 10 սմ հաստությամբ B 12,5 դասի բետոնով	խմ	6.2	3.782	23.45		
37	11-55 11-56	Ցեմենտավազային հարթեցնող շերտի կառուցում 30 մմ հաստությամբ	քմ	112.7	4.867	548.48		
38	11-22	Ջրամեկուսացում մեկ շերտ իզոգամով 3 մմ	քմ	112.7	4.867	548.48		
39	11-55 11-56	Ցեմենտավազային հարթեցնող շերտի կառուցում 30 մմ հաստությամբ	քմ	112.7	4.867	548.48		
40	11-191	Լամինատե հատակների կառուցում 8մմ հաստությամբ / ներառյալ սառնատ /	քմ	41.5	1.018	42.24		
41	11-135	Հատակների իրականացում կերամիկական սալիկներով 330*330 մմ / իրանական արտադրութ. կամ համարժեք /	քմ	71.2	0.906	64.54		
42	5-44 վեր.	60 մմ լայնությամբ պոլիմերային շրիշակների տեղադրում / ներառյալ միացման դետալները /	մ	90.0	0.571	51.42		
		Ընդամենը				1,867	18.94	18.94
		Ներքին հարդարման աշխատանքներ						
43	11-12 վեր.	Պատերի սվաղում 40 մմ հաստ. B 7,5 դասի ցեմենտ-ավազաե շաղախով / 1-ին շերտ /	քմ	63.7	0.980	62.45		
44	11-83 վեր.	BP d=3,0մմ, բջիջը 200x200մմ ամրանային ցանցի ամրացում պատերին	քմ	63.7	0.980	62.45		
45	15-298	Պատերի սվաղում 30 մմ հաստ. B 7,5 դասի ցեմենտ-ավազաե շաղախով ամրանային ցանցի վրա / 2-րդ շերտ /	քմ	63.7	0.980	62.45		
46	15-262	Պատերի և միջնորմների բարելավված ցեմենտավազե սվաղի իրականացում 30 մմ հաստությամբ	քմ	129.8	4.205	545.80		
47	8.-20	Ներսի կողմից արտաքին պատերի ջրամեկուսացում պոլիմերցեմենտային ջրամեկուսիչ ծածկույթով ցեմենտավազե սվաղի	քմ	65.3	1.054	68.85		
48	15-260	Պատերի և միջնորմների հասարակ ցեմենտավազե սվաղի իրականացում սանհանգույցներում և խոհանոցում	քմ	40.4	1.295	52.30		
49	11-57 վեր	Պատերի սվաղի վերանորոգում գաջե շաղախով	քմ	16.7	2.132	35.60		
50	15-277	Դռների և պատուհանների շեպերի սվաղում գաջե շաղախով	քմ	20.8	2.108	43.85		
51	15-275	Պատերի քսահարթում գիպսոնիտի շաղախով	քմ	129.8	4.205	545.80		
5[illegible]	[illegible]-660	Պատերի սոսնձաներկում լատեքսային ներկով	քմ	266.0	2.706	719.80		
53	15-82	Պատերի երեսապատում 300*450 մմ հախճասալերով / իրանական արտադրության կամ համարժեք / ՝	քմ	40.4	2.037	82.30		
54	34-352	,,Արմստրոնգ ,, տիպի կախովի առաստաղների կառուցում / 595x595x7մմ /	քմ	99.2	2.477	245.70		
55	10-64	Կախովի առաստաղի կառուցում 20 սմ լայնությամբ պլաստմասե գունավոր նյութերից	քմ	18.9	1.492	28.20		
56	15-584	Փայտե աստիճանների բարելավված յուղաներկում բազրիքների հետ միասին	քմ	19.7	1.706	33.62		
		Ընդամենը				2,589.17	26.26	26.26
		Արտաքին հարդարում						
57	1-1552	4-րդ կարգի գրունտի քանդում էքսկավատորով	խմ	23.8	2.924	69.6		
58	1-962	4-րդ կարգի գրունտի քանդում ձեռքով	խմ	13.6	0.988	13.4		
59	11-12 վեր.	Պատերի սվաղում 40մմ հաստ. B 7,5 դասի ցեմենտ-ավազաե շաղախով / 1-ին շերտ /	քմ	48.5	2.237	108.5		
60	11-83 վեր.	BP d=3,0մմ, բջիջը 200x200մմ ամրանային ցանցի ամրացում պատերին	քմ	48.5	2.237	108.5		
61	15-298	Պատերի սվաղում 30մմ հաստ. B 7,5 դասի ցեմենտ-ավազաե շաղախով ամրանային ցանցի վրա / 2-րդ շերտ /	քմ	48.5	2.237	108.5		
62	8-23	Պատերի ջրամեկուսացում 3 մմ հաստ.միաշերտ իզոգամով h=1,5-2,0մ	քմ	48.5	2.237	108.5		
63	1-968	Գրունտի ետլիցքի կատարում ձեռքով . տոփանումով	խմ	37.4	2.283	85.4		
64	15-210	Պատուհանների և դռների արտաքին շեպերի սվաղում ցեմենտյա շաղախով	մ	41.0	2.327	95.4		
65	12-280	Պատուհանների արտաքին հարթակների կառուցում ցինկապատ թիթեղից 0,55մմ	քմ	1.7	5.882	10.0		

		Ընդամենը				707.8	7.18	7.18
		Ջրամատակարարում						
66	19-6	50 լ տարողությամբ էլեկտրական ջրատաքացուցիչ բաքերի տեղադրում խոհանոցում և մանկական սանհանգույցում	հատ	1.0	6.400	6.40		
67	16-42	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում ալյումինե շերտով Φ 20x3 մմ / ձևավոր մասերի տեղադրումով և հիդրավլիկ փորձարկումով /	մ	42.0	1.804	75.79		
68	16-134	Փական Φ 20 մմ կեսպտույտ PPR	հատ	5.0	4.000	20.00		
69	22-365	D= 16 մմ ամերիկանկայի տեղադրում	հատ	10.0	3.000	30.00		
70	շուկա	Անցումներ PPR	հատ	22.0	2.077	45.70		
71	շուկա	Եռաբաշխիչ PPR	հատ	8.0	1.000	8.00		
72	շուկա	Անկյունակ PPR	հատ	14.0	1.143	16.00		
		Ընդամենը				201.89	2.05	2.05
		Կոյուղի						
73	23-38 վեր.	150x150 մմ անցքերի բացում 500 մմ հաստ. քարե պատերում	հատ	3.0	2.667	8.00		
74	46-62	Մինչև 50 սմ2 ակոսների փորում բետոնե հատակներում	մ	12.0	1.033	12.40		
75	46-63 46-67	Մինչև 200 սմ2 ակոսների փորում բետոնե հատակներում	մ	16.0	0.988	15.80		
76	22-119	D= 110 x3,3մմ պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում	մ	20.0	0.929	18.58		
77	22-117	D= 50x2,5 մմ պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում	մ	16.0	0.988	15.80		
78	17-61	Զուգարանակոնք կերամիկական	կ-տ	1.0	55.800	55.80		
79	17-61	Զուգարանակոնք մանկական կերամիկական	կ-տ	2.0	24.650	49.30		
8	17-28	Լվացարան մանկական	կ-տ	1.0	40.500	40.50		
81	17-28	Լվացարան ոտնակով	կ-տ	1.0	40.500	40.50		
82	17-17	Խոհանոցակոնք 2 տեղանի	կ-տ	1.0	45.500	45.50		
83	17-36	Հոսակներ ալյումինե 50 մմ	հատ	3.0	3.200	9.60		
84	22-366	Պոլիվինիլքլորիդե եռաբախշիչ 110 x50x110 մմ	հատ	4.0	3.100	12.40		
85	22-366	Պոլիվինիլքլորիդե եռաբախշիչ 110 մմ	հատ	3.0	2.100	6.30		
86	22-366	Պոլիվինիլքլորիդե եռաբախշիչ 50 մմ	հատ	3.0	2.100	6.30		
87	22-365	Պոլիվինիլքլորիդե անկյունակ 110 մմ	հատ	2.0	1.500	3.00		
88	22-365	Պոլիվինիլքլորիդե անկյունակ 50 մմ	հատ	2.0	1.500	3.00		
		Ընդամենը				342.78	3.48	3.48
		Էլեկտրական լուսավորություն						
89	23-120 վեր.	Ակոսների փորում պատերում	մ	120.0	0.564	67.64		
90	8-572-5	Ուժային վահանակի տեղադրում	հատ	1.0	4.000	4.00		
91	8-612-2	Խմբային լուսավորության վահանակ 9 մոդուլի համար	հատ	1.0	5.000	5.00		
92	8-612-2	Խմբային լուսավորության վահանակ 4 մոդուլի համար	հատ	1.0	8.000	8.00		
93	8-525-2	Միաֆազ ավտոմատ անջատիչ 63Ա	հատ	1.0	8.000	8.00		
94	8-525-2	Միաֆազ ավտոմատ անջատիչ 40Ա	հատ	4.0	3.000	12.00		
95	8-403-10	Էլ . սնուցող մալուխ պղնձե ջիղով ВВГ 3x6 մմ մակնիշի	մ	14.0	1.286	18.00		
96	8-402-2	Հաղորդալար պղնձե ջիղով ППВГ 2x4 մմ 2	մ	40.0	0.738	29.50		
97	8-402-2	Հաղորդալար պղնձե ջիղով ППВГ 2x2,5 մմ 2	մ	60.0	0.533	32.00		
98	8-402-2	Հաղորդալար պղնձե ջիղով ППВГ 2x1,5 մմ 2	մ	120.0	0.483	58.00		
99	8-402-2	Հաղորդալար պղնձե ջիղով ПВ-3 , 2,5 մմ 2	մ	240.0	0.521	125.00		
100	8-402-2	Հաղորդալար պղնձե ջիղով ПВ-3 , 6 մմ 2 հողանցման հաար	մ	3.0	3.000	9.00		
101	8-603-1	Առաստաղի / LED / լուսադիոդային լամպերի տեղադրում 36 վտ հզորութ.	հատ	20.0	0.900	18.00		
102	8-603-1	Առաստաղի / LED / լուսադիոդային լամպերի տեղադրում 18 վտ հզորութ.	հատ	4.0	0.600	2.40		
103	8-591-7	Վարդակ մեկտեղանի հողանցումով	հատ	6.0	1.000	6.00		
104	8-591-7	Վարդակ երկտեղանի հողանցումով	հատ	10.0	0.700	7.00		
105	8-591-2	Անջատիչ մեկ ստեղնավոր	հատ	2.0	4.000	8.00		
106	8-591-2	Անջատիչ երկու ստեղնավոր	հատ	8.0	1.500	12.00		
107	շուկա	Տուփ անջատիչների և վարդակների համար	հատ	36.0	0.181	6.50		

108	շուկա	Բաժանման տուփ	հատ	15.0	2.800	42.00		
109	շուկա	Ճկախողովակ Φ = 20 մմ	մ	240.0	0.521	125.00		
110	1-962 q=1,2	4-րդ կարգի գրունտի մշակում խրամուղում ձեռքով	խմ	2.0	9.000	18.00		
111	8-471-1	Հողանցման էլեկտրոդների տեղադրում 50x 50x 5 մմ պողպատյա պնևնունակից l =1,5 մ	հատ	4.0	4.000	16.00		
112	8-472-2	Հողանցման պողպատաշերտ 40x4 մմ ժապավենից	մ	12.0	1.500	18.00		
113	1-969	Գրունտի ետլիցք ձեռքով	խմ	2.0	8.000	16.00		
		Ընդամենը				671.04	6.81	6.81
		Օդափոխություն						
114	20-743	Օդամղիչ պատի , M100 / 4, 335 խմ/ժ , Իտալական արտադրության , խոհանոցի համար	հատ	1.0	13.000	13.00		
115	20-743	Օդամղիչ պատի , M1 00 / 4, 190 խմ/ժ , Իտալական արտադրության	հատ	3.0	6.667	20.00		
116	23-38 վեր.	120x120 մմ անցքերի բացում 650 մմ հաստ. քարե պատերում	հատ	4.0	7.250	29.00		
117	շուկա	D= 100մմ ցինկապատ կլոր խողովակ	մ	17.2	3.877	66.68		
118	շուկա	D= 100մմ ցինկապատ անկյուն	հատ	8.0	4.750	38.00		
		Ընդամենը				166.68	1.69	1.69
		Հակահրդեհային համակարգ						
119	8-612-2	Հակահրդեհային վահանակ 8 մուտք ունեցող	հատ	1.0	11.300	11.30		
120	8-525-2	GSM մոդուլ	հատ	1.0	9.200	9.20		
1.	8-525-2	Սնուցման տուփ / 12 v , 3,5 A / ИВЭПР 12/2	հատ	1.0	10.300	10.30		
122	շուկա	Մարտկոց / 12 v , 7,5 A /	հատ	1.0	7.300	7.30		
123	8-603-1	Ծխի տվիչ INP 212-14 L	հատ	11.0	4.364	48.00		
124	8-603-1	Լուսաձայնային ազդասարք	հատ	2.0	6.000	12.00		
125	8-591-2	Տազնապային ձեռքի սեղմակ ИПР 513-10	հատ	2.0	21.000	42.00		
126	8-402-2	Հրդեհ չտարածող մալուխ 2x0,5 մմ 2	մ	50.0	1.916	95.80		
127	շուկա	Պլաստմասե սակառ / короб / 30x30 մմ	մ	45.0	2.093	94.17		
128	շուկա	Ալյումինե պրոֆիլներով պահարանի պատրաստում և տեղադրում	հատ	1.0	84.500	84.50		
		Ընդամենը				414.55	4.20	4.20
		2 . Տարածքի բարեկարգում						
		Հողային աշխատանքներ						
129	1-1552	4-րդ կարգի գրունտի քանդում էքսկավատորով	խմ	13.2	0.977	12.90		
130	1-962	4-րդ կարգի գրունտի քանդում ձեռքով	խմ	1.5	2.571	3.86		
131	1-968	Գրունտի ետլիցքի կատարում ձեռքով . տոփանումով	խմ	4.2	1.543	6.48		
1	1-1592	Ավելորդ գրունտի բարձում ա/մեքենաները էքսկավատորով	խմ	10.5	1.029	10.80		
133	գնաց.3 էջ 50	Նույնի տեղափոխում ա/մեքենաներով 3 կմ հեռավորության վրա	խմ	10.5	1.029	10.80		
		Ընդամենը				44.84	0.45	0.45
		Քանդման աշխատանքներ						
134	46-83	300 մմ հաստությամբ բետոնե պատերի քանդում	խմ	0.6	4.423	2.65		
135	9-122	Երկաթե դարբասի ապամոնտաժում - 1 հատ / նյութի հետ վերատարձով /	տ	0.3	23.000	6.90		
136	46-99	Բետոնե աստիճանահարթակների քանդում	խմ	0.5	7.600	3.80		
137	23-229 վեր.	Քանդված շին. նյութերի և աղբի բարձում ա/մեքենաները ձեռքով	տ	2.0	12.250	24.50		
138	գնաց.3 էջ 50	Նույնի տեղափոխում ա/մեքենաներով 3 կմ հեռավորության վրա	խմ	0.8	4.875	3.90		
		Ընդամենը				41.75	0.42	0.42
		Դիտահորեր						
139	23-1	Ավազի նախապատրաստական շերտի փռում h = 10 սմ	խմ	0.2	143.500	28.70		
140	6-144	ե/բ դիտահորերի կառուցում B 15 դասի բետոնով / 2 հատ /	խմ	1.1	29.000	31.90		
141	9-123	Մետաղական կափարիչի պատրաստում և տեղադրում 2 մմ հաստ. թիթեղից և 30x30x3 մմ անկյունակներից / 2 հատ /	տ	0.05	738.065	36.90		
142	շուկա	Մետ. թիթեղ 3 մմ հաստ.	քմ	1.3	19.538	25.40		
143	շուկա	Մետ. անկ. 30x30x3 մմ	մ	12.8	1.195	15.30		
144	շուկա	Կողպեք	հատ	2.0	1.500	3.00		

		Ընդամենը				141.20	1.43	1.43
		Բազալտե հարթակներ և աստիճաններ						
145	27-82	Բազալտե եզրաքարերի տեղադրում 120 x 300 մմ բետոնե հիմքի վրա	մ	14.4	16.090	231.70		
146	11-6	Հիմնատակի պատրաստում 20-40 մմ ֆրակցիայի բազալտե խճով 15 սմ հաստությամբ	խմ	4.0	31.125	124.50		
147	11-11	Երկաթբետոնե նախապատրաստական շերտի իրականացում 10 սմ հաստությամբ B 12.5 դասի բետոնով / 26,6 քմ /	խմ	2.7	26.889	72.60		
148	11-221	Սալահատակի կառուցում 4 սմ հաստությամբ բազալտե սալերից գ/ավազե շաղախի վրա	քմ	26.6	16.083	427.80		
149	6-92	Աստիճանների ե/բ սալվածքի իրականացում B 12.5 դասի բետոնով	խմ	1.4	16.929	23.70		
150	46-131 Գ=1,2	2500x 300x150 մմ չափերով բազալտե աստիճանաքայլերի տեղադրում	մ	7.5	3.358	25.18		
		Ընդամենը				905.48	9.18	9.18
		Ընդամենը				9,861	100%	100%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ՝ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ՝ 900292180032
ՀՎՀՀ՝ 09215978

Հ[illegible]այնքի ղեկավարի
Պաշտոնակատար [illegible] Հ. Հակոբջանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ա/Ձ Արսեն Գրիգորյան
մ. Արարատ, Նոր Խարբերդ 1 փ. 20
Արտշինբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2472900008810000
ՀՎՀՀ՝ 47730148

Անհատ
ձեռնարկատեր Ա. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ